# ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3756-Ա « 31 » հուլիսի 2026թ.

ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ՊԱՐՈՆՅԱՆ ՓՈՂՈՑ Հ.4Ա ՇԵՆՔ Հ.36, Հ.37 ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՔՆԱՐԻԿ ՅՈՒՐԻԿԻ ԱՂԼԱՄԱԶՅԱՆԻ, ԿԱՐԵՆ ԱՇՈՏԻ ՎԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՇՈՏ ԳՐԻՇԱՅԻ ՎԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաստատված կարգի 28-րդ կետով, հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2010 թվականի նոյեմբերի 12–ի հ.5299-Ա որոշումը, կառույցը քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանելու վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից 27.07.2026թ. տրված մասնագիտական եզրակացությունը, հաշվի առնելով «ՍԵՅՍՄԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՍՊԸ-ի կողմից 22.06.2026թ. տրված հ.Ե174-26 տեխնիկական դրական եզրակացությունը, բաժնային սեփականատերերի վերաբերյալ ՀՀ կադաստրի կոմիտեի 17/04/2023թ. հ.ԱՏ-17042023-01-0850 տեղեկանքը, բաժնային սեփականատերերի կողմից տրված գրավոր համաձայնությունները, «ԱՐՄԵՆ ԴԱՎԹՅԱՆ» Ա/Ձ-ի կողմից 27.05.2026թ. տրված եզրակացությունը, ինչպես նաև կառույցն իրականացրած անձանց դիմումը (13.07.2026թ. հ.Դ-72910-26).

1.Երևան, Կենտրոն, Պարոնյան փողոց հ.4ա շենք հ.36, հ.37 հասցեներում՝ (սեփականության իրավունքի /օգտագործման/ պետական գրանցման 26.05.2003թ. հ.766337 վկայական, ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր հ.2026LRAVNR) քաղաքացիներ Քնարիկ Յուրիկի Աղլամազյանի, Կարեն Աշոտի Վանյանի և Աշոտ Գրիշայի Վանյանի կողմից ինքնակամ իրականացրած 41,4քառ.մետր ընդհանուր մակերեսով կառույցը (բնակելի /տարածք/) ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ.

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սահմանել, որ կառույցն իրականացրած անձինք.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Երևան քաղաքի բյուջեի N900015211247 հաշվին պետք է վճարեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի հ.912-Ն որոշմամբ հաշվարկված 703800 (յոթ հարյուր երեք հազար ութ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իրենց միջոցների հաշվին պետք է վճարեն կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը.

3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Սույն որոշումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

7.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

**ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**